Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ ***10.08.2017 թ. ժամը 11.00***

Նախագահում էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 84-ը:

Մասնակցում էին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Կարեն Իսախանյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալներ Անդրանիկ Հակոբյանը, Կարեն Հակոբյանը, Արտաշես Նիկոյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը, բաժինների վարիչները, մարզի իրավապահ մարմինների ղեկավարներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. 2017 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:
/Ձեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2017 թվականի 1-ին կիսամյակում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին:
/Ձեկ. Ալբերտ Աղեկյան – մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ/

3. 2017 թվականին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում բերքահավաքի իրականացման ընթացքի մասին:
/Ձեկ. Համբարձում Համբարձումյան – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

4. <<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում իրականացված աշխատանքների մասին:
/Ձեկ. Արմեն Զոհրաբյան – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

5. Այլ հարցեր:

Ելույթներ ունեցան՝

Գարեգին Բեգյանը - Գեղամասար համայնքի ղեկավար
Վոլոդյա Խլոյանը - Վարդենիս համայնքի ղեկավար
Ռոբերտ Սիրականյանը - Վարդաձոր համայնքի ղեկավար
Լյովա Աբրահամյանը - Շատվան համայնքի ղեկավար
Գրիգոր Բոշյանը - Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ
Արմեն Ավետիսյանը - Մարտունի համայնքի ղեկավար
Ալբերտ Աղեկյանը - մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Կարեն Իսախանյանը - ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ

Հայտարարությունով հանդես եկավ՝

Համբարձում Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտնտեսության և բնապահպանության վարչության պետ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Կարեն Բոթոյանը:

1. **Առաջարկվեց մարզի համայնքների ղեկավարներին՝**

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2017 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրման ու աշխատավարձերի գծով կուտակված պարտքերը մարելու ուղղությամբ և ապահովել սեփական եկամուտների համամասնություններով պահանջվող ցուցանիշները.

2) մարզի համայնքների ավագանիների նիստերում քննարկել մարզի համայնքապետարաններում իրականացված վարչական հսկողության արդյունքում արձանագրված թերություններն ու բացթողումները և հետևողական աշխատանքներ տանել օրենսդրությամբ սահմանված ժամկետներում դրանք վերացնելու ուղղությամբ ու այսուհետ բացառել նմանատիպ թերություններն ու բացթողումները.

3) հետևողական աշխատանքներ տանել մարզի համայնքներում բերքահավաքն առանց կորուստների ավարտին հասցնելու և անհրաժեշտության դեպքում դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան՝ հնարավոր օժանդակություն ստանալու համար.

4) սեղմ ժամկետում ավարտել տնտեսվարող սուբյեկտների հետ աղբահանության պայմանագրերի կնքումը:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ